տորութիւն ունի կապել մի քանի շատ օգտակար և ցանկալի ձեռնարկութիւններ։

Կվաւիագէինք, որ պ. Ղուկասեանը շատ հետևողներ ունենար հայութեան մէջ։

Դիւ ա. Բաե. Աղաեեաեց

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ 75 ԱՄԵԱԿԸ

Ինչպէս վաղօրօք ծանուցուած էր լրագիրներում՝ անցեալ մայիսի 21-ին տօնուեցաւ Ներսիսեան Դպրոցի 75 ամեայ գոյութեան տարեդարձը։

Դպրոցի բակը զարդարուած էր ամեն կերպ։ Շուրջը կախուած էին Օգոստ. Կայսեր, Ներսէս Ե ի և յաջորդ կաթուղիկոսների ու Դպրոցի մի քանի բարերարների պատկերները։ Իսկ վահանների վրայ գրուած էին Դպրոցի երկու երկու հին տեսուչների եւ երեք բարերարների անունները։ Ներկայ էր բաւական բազմութիւն։

Հանդէսի սկզբում թեմիս բարձր սրբազան Առաջնորդ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը հոգեւորական դասի հետ հոգեհանգիստ կատարեց Դպրոցի հիմնադրի՝ Ներսէս Ե. Հայրապետի համար, որից յետ անմիջապէս Տ. Գէորգ Սրբազանը հանդէսը բացեց մի գեղեցիկ ճառով, որի մէջ բնաբան առնելով այն, թէ ինչպէս Ցիսուս մի քանի հացով ու ձկնով հազարաւորներ կերակրեց՝ ցոյց տուեց որ նոյնպէս էլ Ներսէս կաթողիկոսը ոչնչից այդպիսի մի մեծ հաստատութիւն ստեղծեց հայազգի չքաւոր մանուկների համար։

Երգեցիկ խումբը պ. Մ. Աքմալեանի ղեկավարութեամբ երգեց Կայսերական հիմնը։ Այնուհետեւ հոգաբարձու պ. Քալանթարը կարդաց Ազգիս Վեհ. Հայրապետի սրբատառ կոնդակը, որ, ինչպէս եւ հիմնը լսեցին ոտքի կանգնած։ Նորին Օծութիւնը օրհնելով երջ. Հիմնադրի յիշատակն՝ այդ կոնդակով պատուիրում էր հոգաբարձութեան. ա) հինգ որդեգիր Նշանակել Դպրոցում, Կիլիկիայի, Աղթամարի, Պարսկաստանի, Ուտիացւոց աշխարհի եւ Զէյթէզահայոց վիճակներից, որոնք ուսումն աւարտելուց յետ գնան իրանց հայրենիք եւ հոգեւորականներ լինին. բ) ի նկատի առնել Դպրոցի այժմեան ուսուցիչներից նոցա, որոնք 25 տարի ծառայել են ուսուցչութեամբ թէ Ներսիսեան եւ թէ այլ դպրոցներում, եւ գ) տեսչին եւ ուսուցիչներին տալ միանուագ պարգեւ ի պատիւ հանդիսին։

Դպրոցի տեսուչ պ. Բալաղեանը կարդաց «Ուսումնական

մասի զարգացման գլխաւոր մոմենտները Ներս. Դպրոցում։ ճառը. իսկ այնուհետեւ սկսուեց ուղերձների ու շնորհաւորական հեռագիրների ընթերցումը։

«Արարատ»-ի խմբագիր Հ. Գարեգին վարդապետը Մայր Աթոռի Ճեմարանի հ. տեսչի եւ ուսուցչաց կողմից կարդաց հետեւեալ ուղերձը.

Ցոչորուած աւերակ Հայրենեաց սիրով՝
Ցաւերով քեզ երկնեց վեհ Հոգին, Ծաղկո՛ց.
Եւ վերածնութեան ոսկի յոյսերով
Փայփայեց քեզ, սիրեց կաթոգին, Ծաղկո՛ց։

Եւ ինչպէս մի հեռու ճրագ ովկիանում
Վհատած նաւորդին ցամաք է հանում,
Նոյնպէս դու ամայի մեր անդաստանում
Շունչ տուիր, սիրտ տուիր ամենքին, Ծաղկո՛ց։

Գարնանային բուրմունքով լցրիր հայ աշխարհ,
Կենսատու զօրութեան նոր աղբիւր դարձար.
Եւ անմա՜հ թող փառքի արեւը պայծառ
Քո գլխին միշտ շողայ խնդագին, Ծաղկոց։

(Ց. Ցովհաննիսեան)

Կարդացուեցան ուղերձներ նաեւ՝ Հ. Նախիջեւանի, Շուշուայ եւ Երեւանի թեմ. Դպրոցների կողմից, Գեր. Արիստակէս, Մակար եւ Խորէն եպիսկոպոսների կողմից, նախկին սաների, Թիֆլիսի Հայոց հրատ. ընկերութեան, «Բանասէր»-ի, «Մշակ»ի եւ «Ցարագի» խմբագրութեանց, Ռաշտի հայուհեաց բարեգ. ընկերութեան կողմից եւ հեռագրական շնորհաւորութիւններ Ներսիսեան Դպրոցի հեռաւոր եւ մերձաւոր նախկին սաների կողմից։

Բայց այդ բոլորի մէջ առանձին կերպով աչքի ընկաւ Բագւում գտնուող նախկին սաների մի խմբի կողմից պատգամաւոր ուղարկուած պ. Ա. Բալայեանի սրտառուչ ճառը, որ ընդունուեց անվերջ ծափահարութիւններով։ Ցաւում ենք որ չյաջողեց մեզ ամբողջութեամբ մէջ բերել այդ «ի խորոց սրտէ» արտասանուած ճառը այստեղ, նկատենք միայն, որ պ. Բալայեանը իւր պատգամաւորութեամբ պատիւ բերեց Ներս. Դպրոցի Բագուի սաներին։

Հանդիսի վերջը աւարտող եւ յառաջադէմ աշակերտները ստացան մրցանակներ։ Դպրոցի սաներից ոմանք եւ Հրատ. ընկերութիւնը իրանց աշխատութիւններից բաժին էին հանել ուսումնարանին։ Երգեցիկ խումբը մէջ ընդ մէջ երգում էր պատշաճաւոր երգեր։ Իսկ հանդէսը փակեց ս. Առաջնորդը Հայր մեր-ով։

Հանդէսը լաւ տպաւորութիւն գործեց հանդիսականների վերայ. բայց չմոռանանք նկատել, որ հանդիսին մասնակցեց Դպրոցի նախկին սաներից չատ չնչին մասը.—զարմանալի ապերախտութիւն։

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ

Տարուս փետրուարի 26-ին ս. Էջմիածնում Մայր Աթոռի հոգևոր Ճեմարանի ուսուցչական խումբը ընտանեկան կերպով տօնեց հայոց մանկավարժութեան պապ Սեդրաք Մանդինեանցի գործունէութեան քսան և հինգամեակը. այդ տօնը միևնոյն ժամանակ և մի հրաժեշտի տօն էր, որովհետև պ. Մանդինեանը հեռանալով մանկավարժական ասպարէզից՝ գնում էր արտասահման խանգարուած առողջութիւնը վերականգնելու նպատակով։

Պ. Մանդինեանը գործել է մեր մէջ որպէս *մանկավարժ* երկար տարիներ վարելով տեսչութեան և ուսուցչական պաշտօններ Ներսիսեան հոգևոր Դպրոցում և ուսուցչութիւն ս. Էջմիածնի հոգևոր Ճեմարանում, որպէս *հեղինակ* բազմաթիւ դասագրքերի հայ ուսուցիչների և ուսումնարանների համար, և վերջապէս որպէս *աշխատակից* հայ թերթերին. նորա մանկավարժական ընտիր յօդուածները տպուել են «Փորձ», «Վարժարան», «Արարատ» ամսագիրների և «Լումայ» հանդիսի մէջ և չատերն էլ առանձին գրքոյկներով։

Ցօբելեանի հանդիսին կարդացուել է Ազգիս Վեհ. Հայրապետի սրբատառ կոնդակը, որով օրհնում է նորա բեղմնաւոր գործունէութիւնը և խոստանում ապագային չմոռանալ նորան։—Ներսիսեան հոգևոր Դպրոցի հոգաբարձութիւնը շնորհաւորելով 25-ամեակը՝ նուիրեց 600 ռուբլի, այսպէս էլ բազմաթիւ շնորհաւորականներ էին ստացուած ճեմարանի և բոլոր հոգևոր Դպրոցների ուսուցչական խմբերից, հայ թերթերի խմբագրութիւններից և նորա բազմաթիւ աշակերտներից ու մասնաւոր անձերի կողմից։

«Լումայ»-ի խմբագրութիւնը ևս իւր կողմից ս. Էջմիածին հետևեալ հեռագիրը ուղղեց. «Խմբագրութիւնս բաղտ ունի շնորհաւորել տաղանդաւոր մանկավարժիդ 25-ամեայ արդիւնաւոր գործունէութիւնը»։